ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 66-Ն
15 նոյեմբերի 2016 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ , <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 70-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Համայնքի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7452 հոդվածի (օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ) տողի <<762.0>> թիվը փոխարինել <<0>> թվով:
2. Համայնքի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7331 հոդվածի (պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) տողի <<723.0>> թիվը փոխարինել <<1485.0>> թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 01, դաս 01 (հանգիստ և սպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<1000.0>> թիվը փոխարինել <<500.0>> թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<1410.0>> թիվը փոխարինել <<1490.0>> թվով:
5. Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 01, դաս 01 (աղբահանում) և տնտեսագիտական դասակարգման 4213 (կոմունալ ծառայություններ) հոդվածի <<1080.0>> թիվը փոխարինել <<1310.0>> թվով, 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<280.0>> թվով:
6. Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 04, դաս 01 (փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<7000.0>> թիվը փոխարինել <<6500.0>> թվով, 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<5250.0>> թիվը փոխարինել <<5205.0>> թվով:
7. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4252 (մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<600.0>> թիվը փոխարինել <<545.0>> թվով:

8. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 01, դաս 02 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի <<30.0>> թիվը փոխարինել <<275.0>> թվով:
9. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 01, դաս 02 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման (պահուստային միջոցներ) հոդվածի <<275.0>> թիվը փոխարինել <<40.0>> թվով:
10. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 03, դաս 03 (ՔԿԱԳ տարածքային կենտրոնի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<244.2>> թիվը փոխարինել <<214.2>> թվով, 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<30.0>> թվով:
11. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 03, դաս 03 (ՔԿԱԳ տարածքային կենտրոնի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածից <<30.0>> հազար դրամ հատկացնել <<Հայաստանի համահայկական հիմնադրամ>> կազմակերպությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
15 նոյեմբերի 2016 թվական